Պարույր Սևակ

Սիրո փոխարեն

Դու մի՛ լինիր այսքան բարի:
Բարությանը դ
Ես կարող եմ լոկ մե՛կ բանով փոխհատուցել՝
Իմ անարժե՛ք շփոթությամբ
Եվ թերևըս ա՛յն թախիծով,
Որ տարորեն շատ է նման
Անվերջ մեռնող ու հարություն անվերջ առնող
Հին դիցերին...
Չէի՞ ուզի:
Շա՛տ կուզեի
Առաջվա պես հրճվել գեղջուկ այս կանաչով,
Որ հիմա քո
Ջսպանակվող կողի տակ է զսպանակվում,
Եվ բարբարոս երգը լսել այն առվակի,
Որ հիմա քո
Մերկ ոտների կաղապարն է ուզում հանել:
Չէի՞ ուզի:
Շա՛տ կուզեի
Մե՛կ անգամ էլ
Չճանաչել ո՛չ մի արգելք ու խոչընդոտ,
Դանդա՛ղ գնալ - շտա՛պ հասնել

Մեր մարդկային հայրենիքը սկզբնական,
Այսինքն՝ իմ ափով ապրել քո ափի մեջ,
Ինձ կապել ու շաղկապել քեզ
Այնպե՛ս,
Որ մենք երկուսովքս մեկտեղ դառնանք
Անքակտելի՝ խաչբառի՞ պես:
Չէի՞ ուզի:
Շա՛տ կուզեի:
Բայց, սիրելի՞ս, չի հոգնում նա՛,
Ով գնում է շատ հեռավո՞ր հանդիպումի:
Իսկ ես հիմա
Զբոսնում եմ միայն ի՛մ իսկ արվարձանում
Եվ զբոսնում՝
Ձեռքերովքս փորագրրած մակնիշները ընթերցելով,
Ու քերծելով շատ ավելորդ գրություններ,
Ու քերծելով առանց մուրճի և տաշիչի՝
Եղունգներո՛վ իմ սեփական...
Եվ իզո՛ւր ես քո բարությամբ,
Քո այս ծածուկ - հայտնի սիրով
Ջանում ապրել իմ կալվածքի մի անկյունում:
Ու ես հիմա
Այս ասում եմ ո՛չ լսելուդ համար արդեն,
Ո՛չ էլ իմ իսկ արդարացման,
Ո՛չ էլ իմ իսկ արդարացման:
Եթե կուզես ճիշտն իմանալ՝
Ասելիս էլ բա՞ն չեմ ասում, ամենևի՛ն,
Այլ պարզապես զբաղմունքս եմ շարունակում՝
Իմ սեփական կալվածքի մեջ
Հոգնածորեն զբոսնելով,
Եվը՛ս մի նոր

Գրություն եմ ավելացնում ջնջածիս տեղ.
«Չի հոգնում նա՛,
Ով գնում է շատ հեռավո՛ր հանդիպումի»:
Իսկ դու... իսկ դու շա՛տ ես մոտիկ:
Ու ես... ու ես շա՛տ եմ հոգնած...

25.X.1965թ.
Չանախչի